ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/39

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.02.2021թ. թիվ 26/26/1305-2021 գրությամբ Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 29.01.2021թ. թիվ ՊՆ//397-2021 գրության հիման վրա 03.02.2021թ. թիվ 26/26/1305-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն

որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/39 ընթացակարգի շրջանակներում 19.02.2021թ. ժամը 10:00-ին և 02.03.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.01.2021թ. թիվ ՊՆ//397-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Մաքսիմ Թովմասյան Ա/Ձ-ի միջև 18.06.2020թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-20-4/13-3 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 25-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 27.12.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/39 ընթացակարգի շրջանակներում 19.02.2021թ. ժամը 10:00-ին և 02.03.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանի միջև 18.06.2020թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-4/13-3» ծածկագրով ապրանքի

մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 6 հատ միջին կամրջակի ռեդուկտոր ԿամԱԶ-4310 ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 3-րդ եռամսյակը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանի միջև 29.09.2020թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-4/13-3» պայմանագրի N 1 փոփոխությունը (հետայսու նաև՝ Փոփոխություն), որի համաձայն՝ Պայմանագրին կից գնման և վճարման ժամանակացույցերում կատարվել է փոփոխություն:

4. Փոփոխությանը կից N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 6 հատ միջին կամրջակի ռեդուկտոր ԿամԱԶ-4310 ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ 30.10.2020թ.:

5. Պատվիրատուն Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանին ուղղված 26.01.2021թ. թիվ ՆՏԱ/232 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Մաքսիմ Թովմասյան Ա/Ձ-ի միջև 18.06.2020թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-4/13-3» գնման պայմանագրի և դրան կից՝ 29.09.2020թ. կնքված փոփոխության շրջանակներում Ձեր Ընկերությունը մինչև 2020թ. հոկտեմբերի 30-ը պետք է մատակարարեր 6 հատ միջին կամրջակի ռեդուկտոր ԿամԱԶ-4310, որոնցից 4-ը չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 25-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ պայմանագիրը»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 27.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2021թ. թիվ 26/26/1305-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.01.2021թ. թիվ ՊՆ//397-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանի միջև 18.06.2020թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-4/13-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 6 հատ միջին կամրջակի ռեդուկտոր ԿամԱԶ-4310 ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 3-րդ եռամսյակը:

ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանի միջև 29.09.2020թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-4/13-3» պայմանագրի N 1 փոփոխությունը (հետայսու նաև՝ Փոփոխություն), որի համաձայն՝ Պայմանագրին կից գնման և վճարման ժամանակացույցերում կատարվել է փոփոխություն:

Փոփոխությանը կից N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 6 հատ միջին կամրջակի ռեդուկտոր ԿամԱԶ-4310 ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ 30.10.2020թ.:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 21.12.2020թ. կազմված պայմանագրի կատարման վերաբերյալ N 558 եզրակացության համաձայն՝ Մաքսիմ Թովմասյան Ա/Ձ-ն Պայմանագրի շրջանակներում չի մատակարարել 4 հատ միջին կամրջակի ռեդուկտոր ԿամԱԶ-4310 ապրանքը՝ ժամկետը ուշացնելով 32 աշխատանքային օրով:

Պատվիրատուն Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանին ուղղված 26.01.2021թ. թիվ ՆՏԱ/232 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Մաքսիմ Թովմասյան Ա/Ձ-ի միջև 18.06.2020թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-4/13-3» գնման պայմանագրի և դրան կից՝ 29.09.2020թ. կնքված փոփոխության շրջանակներում Ձեր Ընկերությունը մինչև 2020թ.

հոկտեմբերի 30-ը պետք է մատակարարեր 6 հատ միջին կամրջակի ռեդուկտոր ԿամԱՋ-4310, որոնցից 4-ը չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 25-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Անդրադառնալով Պատվիրատուի կողմից Պայմանագիրը նաև Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի ա) պարբերությամբ լուծելուն, այն է՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, ապա սույն մասով արձանագրում եմ, որ համաձայն գործում առկա նյութերի՝ Պատվիրատուի կողմից 29.01.2021թ. թիվ ՊՆ//397-2021 գրությամբ ներկայացված փաստաթղթերում նման հիմքեր առկա չեն:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:***

Այսպիսով՝ Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանն իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 18.06.2020թ. կնքված Պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում՝ 2020թ. 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ, քան 30.10.2020թ., 6 հատ միջին կամրջակի ռեդուկտոր ԿամԱՋ-4310 ապրանքի՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն՝ Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանը չի մատակարարել Պայմանագրով նախատեսված

4 հատ միջին կամրջակի ռեդուկտոր ԿամԱԶ-4310 ապրանքը և ապրանքի մատակարարման ժամկետը խախտել է 30 օրից ավելի, որի արդյունքում Մասնակիցը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Մաքսիմ Թովմասյան Ա/Ձ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.02.2021թ. թիվ 26/26/1305-2021 գրությամբ Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Մաքսիմ Թովմասյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**